

բած զիմուսներու պատմութիւնը: Իր ուղեորական օրագրութիւնը հրատարակած է 1846 ի Ազգասիր թերթին մէջ (թիւ 39 եւ յաջորդները): Աշխատասիրած է Յովսէփայ զեղեցիկի գրոյցք ընդ Ասանկերայ առևսնոյ խորոյ գործը, որ իր մահուանէն վերջ հրատարակուած է (1849) Ս. Աթոռոյ տպարանէն եւ նուիրուած Հնդկաստանցի Յովսէփ Աղաբէկեանի, համաձայն մտադրութեան Սահակ վրդ.ի, վասն զի Յովսէփ Աղաբէկեան և իր հայրը մեծ խնամք ունեցած են Ս. Յակոբի պայծառութեան մասին. Սահակ վրդ. ընդօրինակած է նաեւ Մեկն. Եւսեպայ մարգարէի ձեռագիրը, որ կը գտնուի Ս. Յակոբի մատենադարանը. (տե՛ս Արշ. Արարատեան, Նոյ. 23, 1868). ունի ինքնագիր հաւաքածոյ մը ճարտասանական ճառերու, որուն ձեռագիրը կը մնայ նոյնպէս Ս. Աթոռի մատենադարանին մէջ:

ՍՍ.ՀԱԿ ՎՐԴ. ԵԳԻՊՏՈՍԻ.— Մբ. 1822ին:

ՍՍ.ՀԱԿ ՎՐԴ. ԵՐՁՆԿԱՅԻ.— Մբ. Ն. Ս. Յակոբի, կը վախճանի 1742ին: Իր տապանագիրն է հետեւեալը. «Այս է տապան Երզնկացի Սահակ վարդապետին, որ փոխեցաւ ի թուին ՌՃՂԱ (=1742) յիշեցէք ողորմի ասացէք.» Ս. Յակոբի տուած յիշատակներու մասին (տե՛ս ՄՁ. Թ. 532):

ՍՍ.ՀԱԿ ՎՐԴ.— Մբ. 1319 ին Սահակ վրդ. Յովսէփ վրդ.ի հետ կ'ուղեւորի Եգիպտոս եւ Սուլթանին զիմելով՝ կը յաջողի հրովարտակ ստանալ Ս. Յակոբի վանքին եւ Գողգոթայի հայ սեպհականութեանց համար (Ժպե. Հատ. Ա. էջ 203—204):

ՍՍ.ՀԱԿ ՎՐԴ.— Մբ. ՌՃՀԴ (=1725) թուին, Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Մեկն. Մասթրոսի ձեռագիրը, ուր կան նաեւ Ղուկասու Աւետարանին քաղաքացի մեկնութիւնը եւ Գրեգոր Տաթևացիին զանազան քարոզները (Էջմ. Յուր. էջ 255. Թ. 1263):

ՍՍ.ՀԱԿ ՎՐԴ. ԿԱՐԵՅԻ՞.— Մբ. Պուլսէն իրեն ուղղուած նամակի մը սա կարճ խօսքերը նշանակալից գտնելով՝ նոյնութեամբ կը զնենք հոս. Մեծոփացոց քազի եւ եմփուրսնի կողմէն րիպէս գրեալ եւ. բայց նա եւս ոչ է եկել. . . :

ՍՍ.ՀԱԿ ՎՐԴ. (ՄԵԾ) ԿԱՐԿԱՌԵՅԻ.— Մբ. Գրեգոր վրդ. Դարանաղցիին ձեռագիրը Աստուածաշունչին Հոռքի վերքէն